ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանուն՝** Նարեկ Կարապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** Մակրոտնտեսական քաղաքականության վարչության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Ալմաթի 2025 թվականի փետրվարի 17-ից մինչև փետրվարի 21-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը՝** Արժույթի միջազգային հիմնադրամ և Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC)

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Medium Term Macro-Fiscal Frameworks / Միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակներ» թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին:

6. **Քննարկված թեմաները՝**

1. Բյուջետային որոշումներին աջակցելու նպատակով մակրո-ֆիսկալ վերլուծությունների կիրառում,
2. Վերևից ներքև մոտեցում. Միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակ (MTFF),
3. Ներքևից վերև մոտեցում. բազային ծախսերի գնահատում,
4. Հարկաբյուջետային տարածքի և ծախսերի առաջնահերթություն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Աշխատաժողովի ընթացքում իրականացվել են խմբային գործնական աշխատանքներ, մասնավորապես՝ Միջնաժամկետ մակրոտնտեսական շրջանակի մշակում տիպային երկրի համար (մակրոտնտեսական ենթադրությունների ներմուծում, բազային սցենարի վերլուծություն, հարկաբյուջետային կանոնների և պարտքի կայունության վրա ազդեցության ուսումնասիրում, առաջիկա բյուջեի համար ծախսային առաջնահերթությունների որոշում և ռեսուրսների բաշխում) և իրականացված աշխատանքների արդյունքների ներկայացում աշխատաժողովի մասնակիցներին և դասընթացավարներին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի շրջանակներում հանդիպումներ չեն եղել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացից ստացված գիտելիքները և տրամադրված գործիքները կկիրառվեն մակրոտնտեսական քաղաքականության վարչության կողմից իրականացվող աշխատանքներում, մասնավորապես՝ տնտեսական քաղաքականության վերլուծության և յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի և Միջնաժամկետ ծախսային ծրագրի մակրոտնտեսական շրջանակի մշակման աշխատանքների կատարելագործման, ու հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման, ինչպես նաև քաղաքականության այլընտրանքային սցենարների մշակման և վերլուծության նպատակների համատեքստում:

10. Գործուղվող՝

Մակրոտնտեսական քաղաքականության վարչության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի պետ	Նարեկ Կարապետյան

26.02.2025թ.